



«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՍՈՒԻԲԻԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»  
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Քաջարան, 3309, Լեռնագործների 18, հեռ. (+374 285) 3 31 31, էլ. փոստի հասցե՝ [info@zcmc.am](mailto:info@zcmc.am)

21.07.2020թ.

N ԹՂ - 613

ՀՀ Սյունիքի մարզի Կապան  
համայնքի ղեկավար  
պարոն Գ. Փարսյանին

Հարգելի պարոն Փարսյան

Ղեկավարվելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման պահանջներով՝ կից Ձեզ ենք ներկայացնում «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության կողմից նախատեսվող գործունեության (ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքում անտառավերականգնման և անտառապատման աշխատանքներ) վերաբերյալ փաստաթղթերը՝ 2020 թվականի օգոստոսի 6-ին ժամը 11:00-ին, հանրային լսումներ (քննարկում) կազմակերպելու համար:

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքում, առաջարկվում է լսումները (քննարկում) կազմակերպել Կապանի մշակույթի պալատում (փոքր դահլիճ) (հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Չարենցի 1):

Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ հանրային լսումների (քննարկում) պատասխանատու է հանդիսանում համայնքի ղեկավարը, ով կրում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշմամբ սահմանված գործառույթների իրականացման պարտականությունը, այդ թվում՝ հանրային լսումների (քննարկում) վերաբերյալ ծանուցումը և նյութերը պաշտոնական կայքում տեղադրելու, համայնքի ղեկավարի նստավայրի և հանրային նշանակության շենքերի՝ հայտարարությունների համար առանձնացված ցուցատախտակների վրա փակցնելու, նախատեսվող գործունեության վերաբերյալ փաստաթղթերը սահմանված կարգով և ժամկետներում ծանոթացման տրամադրելու պարտականությունները:

Կից ներկայացվում է.

1. Նախատեսվող գործունեության ծրագրի ամփոփագիրը,
2. Նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային լսումների (քննարկում) մասին ծանուցումը:

Առդիր՝ 15 թերթ:

Հարգանքով

Գլխավոր տնօրենի տեղակալ՝

Կատարող  
Իրավաբանական ղեկավարտամբան  
Հեռ.՝ 093 59-69-08



Թ. Հռֆման



---

ԱՄՓՈՓԱԳԻՐ  
ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ  
ԱՆՏԱՌԱՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ  
ԵՎ ԱՆՏԱՌԱՊԱՏՄԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ

---

Նախաձեռնող՝

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ



## Բովանդակություն

Նախատեսվող գործունեության ընդհանուր նկարագիր.....	Էջ 2
Նախատեսվող գործունեության կատեգորիան.....	Էջ 6
Տնկման համար նախատեսված տեսակները.....	Էջ 7
Անտառատնկման սխեմաներ.....	Էջ 7
Տեղմասեր (Արծվանիկ).....	Էջ 9
Տեղամաս (Կապան քաղաք).....	Էջ 9
Ծառատնկման համար նախատեսված տեսակների ընդհանուր ցանկ.....	Էջ 12
Ռեսուրսների գնահատում.....	Էջ 13





## Նախատեսվող գործունեության ընդհանուր նկարագիր

«Զանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության կողմից նախատեսվում է ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի տարածքում իրականացնել անտառապատման և անտառավերականգման աշխատանքներ՝ 80 հա ընդհանուր մակերեսով տարածքի վրա՝ ապահովելով ՀՀ կառավարության 2015 թվականի մայիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Արծվանիկի, Սևաքարի, Աճանանի, Չափնիի և Սյունիքի գյուղական համայնքների վարչական սահմաններում՝ որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» թիվ 791-Ն որոշման լիարժեք իրագործման արդյունքում անտառային տնտեսությանը հասցվող վնասի հատուցումը:

Աշխատանքները նախատեսված է կատարել փուլային տարբերակով.

1-ին փուլում իրականացվելու են անտառապատման և անտառավերականգման աշխատանքներ՝ լիազոր մարմնի, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և ազակիր համայնքի (Կապան համայնք) ներկայացուցիչների հետ աշխատանքային քննարկումների արդյունքում որոշված 4 տարածքներում՝ 20 հա ընդհանուր մակերեսով (*Նկար 1*):

2-րդ փուլում նախատեսվում է Կավարտի բացահանքի և արտադրական լցակույտերի տարածքում (60 հա ընդհանուր մակերեսով) իրականացնել երկրաֆիզիկական և հիդրոերկրաբանական հետազոտություններ, տարածքի կայունության ուսումնասիրություն՝ կապված ստորգետնյա շահագործական փորվածքների խիտ ցանցի հետ, թթվային դրենաժի ձևավորման ուղիների և ծավալի ուսումնասիրություն (*Նկար 2*):

3-րդ փուլում նախատեսվում է համապատասխան հետազոտական աշխատանքների արդյունքների հիման վրա մշակել Կավարտի բացահանքի և արտադրական լցակույտերի լեռնատեխնիկական և անտառապատման եղանակով (կամ գիտականորեն հիմնավորված և արդյունվետ այլ եղանակով) կենսաբանական վերականգման նախագիծ, ինչպես նաև համապատասխան փորձաքննություններից հետո ապահովել դրա իրականացումը:

Վերը նշված աշխատանքները նախատեսվում է իրականացնել հետևյալ ժամանակացույցին համապատասխան.

1-ին փուլ՝ 3-4 տարի (2021-2024թթ.),

2-րդ փուլ՝ 2-3 տարի (2021-2023թթ.),

3-րդ փուլ՝ կախված է կատարված հետազոտությունների արդյունքում նախատեսված միջոցառումների ծավալից (կներկայացվի մշակված և փորձաքննության ներկայացված նախագծային փաստաթղթերով):







**Նկար 1.** Կապան-Արժվանիկի շրջակա տեղամասերում ընտրված 20 հա ընդհանուր մակերեսով 4 տարածքների սխեմատիկ քարտեզ



**Նկար 2.** Կավարտի բացահանքի և արտադրական լցակայաների տարածք՝ ընդհանուր մակերեսը 60 հա

Շառատնկման նպատակով այդ չորս հատվածները ընտրվել են Կապան քաղաքի և Կապանի անտառոտնտեսության Սյունիքի անտառապետության անտառային ֆոնդի դեզրադացված, էռոզացված կամ անտառահատված տեղանքներում:

1.5 հա մակերեսով առաջին հատվածը գտնվում է Կապան քաղաքի կենտրոնական հատվածում՝ շուկայի շրջակայքում, երկրորդը՝ 0.5 հա մակերեսով, գտնվում է Կապան քաղաքի Դավիթ-Բեկ թաղամասում, երրորդ հատվածը՝ 4.5 հա մակերեսով, գտնվում է Արժվանիկի պոչամբարից արևելք, Կապան-Գորիս





Ճանապարհի ձախ կողմում, իսկ չորրորդը՝ 13.5 հա մակերեսով, Արծվանիկի պոչամբարից արևելք, Կապան-Գորիս ճանապարհի աջ կողմում (Նկար 3-6):



*Նկար 3. Կապան քաղաքում գտնվող 1,5 հա տարածք*




*Նկար 4. Կապան քաղաքում գտնվող 0,5 հա տարածք*







**Նկար 5.** Կապան-Գորիս ճանապարհի աջ կողմում գտնվող 13,5 հա տարածք



**Նկար 6.** Կապան-Գորիս ճանապարհի ձախ կողմում գտնվող 4,5 հա տարածք

Ուսումնասիրված չորս հատվածները գտնվում են Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լեռնաձյուղավորումների մակրոլանջերին, ծ.մ. 800-1000 մ բարձրություններում, համապատասխանաբար ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքում և Արծվանիկի պոչամբարի շրջակայքում (Նկար 3-6):



Ուսումնասիրվող տարածքները բուսաաշխարհագրական տեսակետից պատկանում են Բորեալ ֆլորիստիկ ենթաթագավորության Ցիրկումբորեալ գավառի Կովկասյան ենթագավառի Զանգեզուրի ֆլորիստիկ շրջանին: Ուսումնասիրվող հատվածների բուսականությունը ունի արտահայտված քսերո-մեզոֆիլ և մեզո-քսերոֆիլ բնույթ՝ յուրահատուկ են տափաստանները, տերևավոր նոսրանտառային անտառները, թփուտները, ինչպես նաև գետամերձ բուսականությունը: Ֆոնային բուսատեսակներից լայն տարածում ունի ժանտափուշ կամ ցաքի փշոտ (*Paliurus spina-christi*) քսերոֆիլ բուսատեսակը:

Բուսականությունը ուսումնասիրվող տարածքներում ենթարկվում է բարձունքային գոտիականությանը, ըստ որի՝ տարբեր բարձրությունային գոտիներում ձևավորվում են միայն այդ բարձրություններին հարմարված բուսատեսակներ: Օրինակ՝ Ողջի գետի հովտում աճում են կաղնու երեք հիմնական տեսակներ: Դրանցից կաղնի արաքսյանը զբաղեցնում է ստորին բարձրություններից մինչև ծ.մ. մոտ 1000 մ բարձրությունները: Կաղնի վրացականը զբաղեցնում է մոտ 1000-1500 (1550) մ, իսկ կաղնի արևելյանը (կամ խոշորատեղը) զբաղեցնում է մոտ (1450) 1500-2400 մ բարձրությունները:

Ուսումնասիրվող տարածքներում (Կապանի, Սյունիքի, Արծվանիկի շրջակայքերում) անտառները արտահայտված են վրացական և արաքսյան կաղնիների (*Quercus iberica*, *Quercus araxina*) անտառներով: Բացի կաղնուց, բնափայտավոր բուսատեսակները արտահայտված են կովկասյան և արևելյան բոխիների (*Carpinus betulus*, *Carpinus orientalis*), կովկասյան տանձենու (*Pyrus caucasica*), հացենու (*Fraxinus excelsior*, *Fraxinus oxycarpa*), թեղու (*Ulmus minor*), վրացական թխկու (*Acer ibericum*), շլորենու (*Prunus divaricata*), տխլենու (*Corylus avellana*), հոնի (*Cornus mas*), ուռենու (*Salix excelsa*, *Salix triandra*), սրնգենու (*Ligustrum vulgare*), դրախտածառի (*Cotinus coggygia*), վրացական ցախակեռասի (*Lonicera iberica*), Պալլասի դժնիկի (*Rhamnus pallasii*), սզնու (*Crataegus sp.*), մասրենու (*Rosa sp.*), մոշենու (*Rubus sp.*) տեսակների և այլ ծառերով ու թփերով (*Նկար 7-14*): Շատ տեղերում զարգացել է երկրորդային բուսականությունը:

### **Նախատեսվող գործունեության կատեգորիան**

Նախատեսվող գործունեությունը՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14 հոդվածի 6-րդ մասի 5-րդ կետի «ա» ենթակետի՝ անտառավերականգնում, անտառապատում, ներառված է «Գ» կատեգորիայի դասակարգված գործունեության տեսակների ցանկում:

Տվյալ տարածքները բնության հատուկ պահպանվող և ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներ չեն և չեն գտնվում պատմամշակութային հուշարձանների սահմաններում:





## Տնկման համար նախատեսված տեսակները

Կապանի անտառտնտեսության տարածքում նախատեսվող տնկումների ընթացքում պլանավորվում է տնկել ծառերի և թփերի վերը նշված տեղական տեսակները, որոնք առավել լավ են համապատասխանում տեղի բնակլիմայական պայմաններին, կայուն են վնասատուների և հիվանդությունների հանդեպ:

Անտառատնկումների համար նախատեսված երեք հատվածները ունեն հետևյալ նշանակությունները՝

1. Բնապահպանական,
2. Ջրապաշտպանական,
3. Կլիմայակարգավորիչ,
4. Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների մեղմացման:

Այս տնկումների արդյունքում ձևավորվող անտառները կնվազեցնեն փոշու պարունակությունը օդում, մեղմացնելով Կապան համայնքի կլիման, կնվազեցնեն օդի չորությունը: Դրանք իրար կմիացնեն առանձին անտառահատվածները, ստեղծելով մեկ միասնական անտառ կամ անտառաշերտեր, որտեղ կենսաբազմազանության մաս կազմող միկրօրգանիզմները, սնկերը, բույսերը, կենդանիները կկարողանան կայուն ձևով գոյատևել, իսկ կենդանիները նաև անարգել կատարել միգրացիաներ համայնքի տարբեր անտառահատվածներում:

## Անտառատնկման սխեմաներ

Կախված հատվածների տեղադրությունից, լանջերի թեքությունից ու դիրքադրությունից, հողերի կազմից կամ ջրաբանական ռեժիմից, ըստ ծառատեսակների արագաճության, սովվերատարության և այլ հատկանիշների՝ կդիտարկվեն տարածաշրջանին բնորոշ լայնատերևավոր ծառատեսակներ, որոնք համաձայնեցված են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի մասնագետների հետ (Նկար 7-14):



Նկար 7. Հացենի սովորական



Նկար 8. Հացենի սրատերև





Նկար 9. Կաղնի վրացական



Նկար 10. Կաղնի արարսյան



Նկար 11. Թեղի փոքր



Նկար 12. Դրախտածառ



Նկար 13. Թխկի վրացական




Նկար 14. ուռնի եռառէջ





## Տեղամասեր (Արծվանիկ)


Արծվանիկ գյուղի շրջակայքի 2 հատվածների համար կգծվեն ծառերի տնկման անհրաժեշտ սխեմատիկ գծագրեր, նշելով յուրաքանչյուր ծառի տեսակը և քանակը, դրանց համար կկազմվեն համապատասխան տիպի փորվածքներ (փոսային կամ խրամատային), կընտրվեն ծառերի ու ծառերի շարքերի միջև օպտիմալ հեռավորությունները (օր. 10-20-40 սմ-ից մինչև 1-2 մ) և այլն (Նկար 15):



**Նկար 15.** Նախատեսվող հատվածի տնկման և տեսակային տեղաբաշխման սխեմայի օրինակ – 1 (1-կաղնի վրացական, 2- հացենի սրատերև, 3-թեղի փոքր, 4-դրախտածառ սովորական, 5-բարդի Բոլլեի)

## Տեղամաս (Կապան քաղաք)

Կապան քաղաքի համար ևս կգծվեն ծառերի տնկման անհրաժեշտ սխեմատիկ գծագրեր, նշելով յուրաքանչյուր ծառի տեսակը և քանակը (Նկար 16), դրանց համար կկազմվեն համապատասխան տիպի փորվածքներ կամ խրամատներ:



**Նկար 16.** Նախատեսվող հատվածի տնկման և տեսակային տեղաբաշխման սխեմա – 2 (1-կաղնի վրացական, 2-կաղնի արաքսյան, 3-հացենի սովորական, 4-թխկի հիրկանյան, 5-տանձենի կովկասյան)

Ծառերի համար նախատեսված փոսերը կամ խրամատները (Նկար 17-18) որոշվելու են ըստ լանջերի թեքության, ծառատեսակների կազմի, հողերի տիպերի: Օրինակ՝ մինչև 15° թեքությունների վրա նախատեսվում է կիրառել խրամատների փորման մեթոդը (նկար 17): 20-45° և ավել թեքությունների վրա կիրառվելու է փոսերի





մեթոդը (նկար 18): Կախված տեղանքի բարդությունից, կիրառվելու են ինչպես մեխանիզացված աշխատանքներ, այնպես էլ ձեռքի աշխատանքներ (նկար 19):



**Նկար 17.** Ծառերի տնկման խրամատային մեթոդը



**Նկար 18.** Ծառերի տնկման փոսային մեթոդը



**Նկար 19.** Աշխատանքների մեխանիզացված մեթոդ

Ծառերը տնկվելու են ինչպես բաց, այնպես էլ փակ արմատային համակարգով (Նկար 20): Փակ արմատային համակարգով ծառերը հնարավորություն են տալիս ավելի երկարացնել տնկման ժամանակահատվածը:





**Նկար 20.** Փակ արմատային համակարգով տնկիների աճեցման մեթոդ

Կախված ծառերի տեսակներից, տնկվելու են տարեկան տնկիներ, ինչը կախված կլինի ծառատեսակից:

Փոսերի ու խրամատների լայնությունները և խորությունները տարբեր են լինելու. դրանք կախված են լանջերի թեքություններից, ծառերի ու թփերի տեսակներից:

Կիրառվելու են անտառատնկման պրակտիկայում ներկայումս լայնորեն կիրառվող խոնավություն ֆիքսող գելային նյութեր (նկար 21): Դրանք ծառերի տնկման ժամանակ խառնում են հողին, և մեկ անգամ ջրելով, կարող են երկար պահել ծառին անհրաժեշտ խոնավությունը, թույլ տալով բույսին աստիճանաբար յուրացնել այն:



**Նկար 21.** Խոնավություն ֆիքսող գելային նյութեր



## Ծառատնկման համար նախատեսված տեսակների ընդհանուր ցանկը

1. Կաղնի արաքսյան (*Quercua araxina*),
2. Կաղնի վրացական (*Quercus iberica*),
3. Թխկի հիրկանյան (*Acer hyrcanum*),
4. Թխկի վրացական (*Acer ibericum*),
5. Փոշնի կովկասյան (*Celtis caucasica*),
6. Փոշնի մերկ (*Celtis glabra*),
7. Հացենի սովորական (*Fraxinus excelsior*),
8. Հացենի սրատերև (*Fraxinus oxycarpa*),
9. Թեղի փոքր (*Ulmus minor*),
10. Թեղի մերկ (*Ulmus glabra*),
11. Դրախտածառ սովորական (*Cotinus coggygria*),
12. Կարմրան ճյուղառատ (*Tamarix ramosissima*),
13. Կարմրան պայծառ (*Tamarix florida*),
14. Գիհի կազակական (*Juniperus sabina*),
15. Նոնենի (*Punica granatum*),
16. Պայթակենի կիլիկյան (*Colutea cilicica*),
17. Սարիչամիչ բարձր (*Ephedra procera*),
18. Ցախակեռաս վրացական (*Lonicera iberica*),
19. Ուռենի եռառէջ (*Salix triandra*),
20. Բարդի Բոլլեի (*Populus bolleana*),
21. Տանձենի կովկասյան (*Pyrus caucasica*),
22. Խնձորենի արևելյան (*Malus orientalis*),
23. Օրոճ անդրկովկասյան (*Genista transcaucasica*):



## Ռեսուրսների գնահատում

Ըստ նախնական հաշվարկների 20 հա տարածքի համար անհրաժեշտ կլինի 70-80 հազար տնկի, որը կազմում է մոտ 4000 տնկի 1 հա-ի հաշվով: Տնկիները ձեռք կբերվեն, ըստ առկա ռեսուրսների (ծառերի աճեցում տնկարաններում, բնական վերաճի շնորհիվ առկա տնկիների ձեռքբերում կամ գնում անհատներից ու կազմակերպություններից և այլն): Տնկման աշխատանքները իրականացվելու են ինչպես գարնանը, այնպես էլ աշնանը՝ պլանավորելով սեղմ ժամկետներ, քանի որ եղանակային պայմանները կարող են սահմանափակել աշխատանքներին հարմար օրերի քանակը (աշխատանքներում կարող են ներգրավվել նաև դպրոցականներ և այլ կամավորներ, եթե նախօրոք պատրաստվեն ծառերի փոսերը ու խրամատները):

Գլխավոր և ուղեկցող ծառատեսակները ըստ քանակի, սխեմաները, նախատեսվող խնամքի աշխատանքները, իրականացման ժամանակացույցը մանրամասն կներկայացվեն հայտով:





**ԾԱՆՈՒՑՈՒՄ**  
**ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՀԱՆՐԱՅԻՆ**  
**ԼՍՈՒՄՆԵՐԻ (ՔՆՆԱՐԿՈՒՄ) ՄԱՍԻՆ**

2020 թվականի օգոստոսի 6-ին ժամը 11:00-ին Կապանի մշակույթի պալատում (փոքր դահլիճ) (հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Չարենցի 1) տեղի կունենա հանրային լսում (քննարկում)՝ «ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքում անտառավերականգնման և անտառապատման աշխատանքներ» նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Կապանի մշակույթի պալատում (փոքր դահլիճ) (հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Չարենցի 1):

Ձեռնարկող՝	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերություն
Նախատեսվող գործունեության իրականացման վայրը՝	ՀՀ Սյունիքի մարզ, Կապան համայնք
Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցություն	Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր է դրական ազդեցություն
Փաստաթղթերին ծանոթանալու վայրը, օրը և ժամը	ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի ղեկավարի նստավայրի վարչական շենքում սույն հայտարարության հրապարակման օրվանից ամեն օր՝ ժամը 14:00-ից մինչև 16:00-ն, մինչև դիտողություններ և առաջարկություններ ներկայացնելու ժամկետի ավարտը
Դիտողություններ և առաջարկություններ ներկայացնելու ժամկետը	12 աշխատանքային օր՝ հաշված սույն ծանուցման հրապարակման օրվանից
Քննարկումների պատասխանատու	ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի ղեկավար
Քննարկումների պատասխանատուի էլ. փոստի հասցեն և հեռախոսահամարը	էլ. փոստ՝ <a href="mailto:kapan.syuniq@mta.gov.am">kapan.syuniq@mta.gov.am</a> , <a href="mailto:asya.ghazaryan@zcmc.am">asya.ghazaryan@zcmc.am</a> , հեռ. +374 41-811-044, +374-285-42036, 060-521-818

